

ԶԻՆՎԵՔ

Հեղինակ՝ Թոնի Ալամո

Շատ շուտով համաշխարհային երկրաշարժը և մի շարք մարգարեացված աղետներ ցնցելով կարթնացնեն ամբողջ աշխարհի բնակչությանը՝ զարհուրելի, Աստծո կողմից ուղարկված անգուցական մղձավանջով:

Մրանից քիչ անց, ես երկու աղետ կլինի՝ երկու մեծ երկնաքարի տեսքով, որոնք ավելի շատ ավերածություններ կպատճառեն, քան շատ ջրածնային ռումբեր: Դրանցից մեկը ուժգին հարվածով կընկնի օվկիանոսը, ավերելով դրա մեկ երրորդը, ներառյալ կյանքը դրա մեջ: Իրականում, այն ջուրը կվերածի արյան և իհարկե կկործանի այնտեղի ողջ կյանքը և բոլոր նավերը:¹ Երկրորդ երկնաքարը կբախվի և կհարթեցնի մայրցամաքի մի մեծ մաս, թունավորելով գետերի և աղբյուրների մեկ երրորդը, դրանք դարձնելով թունավոր (դառը): Շատ մարդիկ կմահանան այս ջրերից:² Մրանից հետո, մոտավորապես երկու միլիարդ մարդ, երկրի բնակչության մեկ երրորդը, կմեռնի կրակից, ծխից և լավանան ծծմբից:

Հենց որ այս աղետները սկսվեն, կյանքը այլևս երբեք չի լինի այնպիսին, ինչպիսին մենք գիտենք այն այսօր: Նախքան այս անհավատալի, անասելի, մի քանի ամիս տևողությամբ մղձավանջները, մարդկանց մեծամասնությունը զբաղված կլինի իրենց ձանձրալի, առօրյա աշխատանքով, դպրոցներով և տուն մաքրելով: Որոշ մարդիկ զբաղված կլինեն իրենց սոցիալական և քաղաքական միջոցառումներով, նոր զվարճանքներ փնտրելով, գնելով, վաճառելով, պլանավորելով և այլն: Որոշները զբաղված կլինեն պլանավորելով իրենց սովորական առօրյա կամ գիշերային զանազան գործերը կամ պլանավորելով, թե ինչ հիմար ձևով պիտի ծախսեն իրենց գումարները ուրբաթ կամ շաբաթ օրերին:

Բժիշկներն և բուժքույրները դեռևս կմտածեն, որ Աստծո կողմից ուղարկված ամենավատ դժբախտությունները, այսօրվա անբուժելի հիվանդությունները, վիրուսները և մանրէներն են, որոնք աշխարհի տարբեր վայրերում համաճարակների պատճառ են դառնում: Արդյո՞ք անողները կշարունակեն իրենց առօրյա սովորական քանակի աբորտներն իրականացնել: Թմրանյութեր վաճառողները կշարունակեն շրջել և իրենց մահացու ապրանքը վաճառել: Որոշ դպրոցներ, լրատվամիջոցներ և հրատարակչություններ, ինչպես նաև կինոֆիլմերի և հեռուստատեսային արդյունաբերությունը, կշարունակեն կաշառել և ստել մեր երեխաներին և



Վիլի Նիլսոնը նկարված է Քահանա Թոնի Ալամոյի հետ, բարեկամական հանդիպում կուլիսներում, Գրենդ Օլե Օպրի, Նաշվիլ, Թենեսի նահանգ

ամբողջ աշխարհին: Որոշ դատավորներ և դատախազներ զբաղված կլինեն իրենց սովորական արդարադատությունն ապականող չարիքները գործել: Երիտասարդ տղամարդիկ և կանայք, իրականության և ճշմարտության մասին ոչինչ չիմանալով, կպլանավորեն իրենց դատարկ կարիերան և համալսարանական կրթությունը կամ կպլանավորեն իրենց կյանքի այլ ոլորտներ տարատեսակ դատարկ և անարդյունավետ ձևով:

Այա, աշխարհում իբրև ահ ու սարսափ բոլորին, Հիսուսը, ով այսօր առհասարակ և սխալմամբ հայտնի է որպես «գլոսսիտ Հիսուս» կտրուկ, առանց որևէ նախազգուշացման, աշխարհը կմասնատի և բառացիորեն այն մասերի կբաժանի: Կրկին, աշխարհի բնակչության մեկ երրորդը կոչնչացվի, ապա միլիոնավոր և միլիոնավոր մարդիկ կմահանան տարբեր սարսափելի ձևերով, այնպիսի ձևերով, որոնք երբեք մարդու միտքը չի կարող երագել կամ պատկերացնել:³

ԲՈՒՆՈՒՆՆԱԿԱՆ ՄԱՐԿԱՆԵՐ ԶԵՐ ՄՐՏԵՐԸ

Նախապատրաստեք ձեր սիրտը վշտերի: Աշխարհի մարդիկ պետք է անմիջապես պատրաստեն իրենց մտքերը, իրենց ոգիները, իրենց սրտերը և իրենց հոգիները այս աղետներին, որոնք վրա կհասնեն հենց այս սերնդի

(Շարունակությունը էջ 2-ում)

(Շարունակությունը էջ 1-ի)

Ժամանակ:⁴ Աշխարհը շուտով կիմանա առանց որևէ կասկածի, որ այս բոլոր ահավոր, սարսափելի, ապշեցուցիչ աղետներն Աստծուց են, ոչ թե «Մայր բնությունից» և որ դրանք բնական աղետներ չեն: Ինքներդ կարդացեք Աստծո Խոսքը: Նրանք կհասկանան, որ այս ահավոր աղետները բառացի են, քանի որ այն կարգը, որով նրանք կհարվածեն երկրը կանխատեսված է Աստծո Խոսքով, Աստվածաշնչով: Այս աղետները ուղարկվելու են Աստծո կողմից, որպեսզի ոչնչացնեն ռազմատենչ, չապաշխարող մեղսավորներին:

Օճնորոգ գրքում գրված է. «Երբ Տեր Աստուած տեսաւ, որ մարդկանց չարագործութիւնները բազմանում են երկրի վրայ [մեղավոր, չար, դաժան], եւ ամէն ոք իր մտքում ամէն օր խնամքով չարագործութիւններ է նիւթում» (Օճնորոգ 6:5): «Ապականուեց երկիրն Աստծու առաջ, աշխարհը լցուեց անարդարութեամբ» (Օճնորոգ 6:11): Այսպիսով, Աստված ոչնչացրեց երկիրը ջրով՝ «մեծ ջրհեղեղով»: «Ջուրն այնքան սաստկացաւ երկրի վրայ, որ ծածկեց երկնքի տակ գտնուող բոլոր բարձրաբերձ լեռները: Տասնհինգ կանգուն աւելի վեր բարձրացաւ ջուրը եւ ծածկեց բոլոր լեռները: Մեռան երկրի վրայ շարժուող բոլոր կենդանի էակները՝ թռչունները, անասուններն ու գազանները, երկրի վրայ սողացող բոլոր սողուններն ու բոլոր մարդիկ: Յամաքի վրայ եղած ամէն քան» (Օճնորոգ 7:19-22):

Նոյի օրերում, Աստված, ով գիտեր վերջը, ինչպես գիտեր սկիզբը, կանխատեսեց այսօր: Ես համոզված եմ, որ դուք տեսնում եք այսօրվա աշխարհում տիրող դաժանությունը: Տերն ատում է մեղքը և Տերը ատում է դաժանությունը, բայց Աստված Իր Խոսքի Աստված է և Նա ասում է. «որովհետեւ, ինչ որ մարդս սերմանում է, նոյնը եւ կը հնձի» (Գաղատիցիներին 6:7): Երկրի վրայի դաժանությունը շատ ավելի շատ է, քան Նոյի օրերին: «Եւ եթէ Աստուած այդ օրերը իր ընտրեալների համար չկարճէր, ոչ մի մարդ չէր ազատուի. Բայց նա իր ընտրեալների պատճառով, - որոնց ընտրեց, - կարճեց այդ օրերը» (Մարկոս 13:20): Ընտրյալները նրանք են, ովքեր Քրիստոսի մարմնում են, Նոր Իգրայելը, Նոր Երուսաղեմը, Քրիստոսի հարսնացուն, եկեղեցին:

Քանի որ մեղքը և դաժանությունն ավելի շատ է, քան նախկինում, Աստված չի ժառանգում երկիրը, կուղարկի այդ բոլոր աղետները, բոլորը միաժամանակ: Դրանք իրար շատ արագ կհաջորդեն: Աղետների հերթականության մարգարեությունները տեղի կունենան ճիշտ այնպես, ինչպես Տերն ասել է: Մենք ապրում ենք «վշտերի սկզբում», ինչպես նշել է Քրիստոսը Մատթեոսի գրքի 24:8-ում: Այն, ինչ հիմա տեսնում եք երկրի վրա, միայն սկիզբն է վշտերի:⁵ Այդ դժբախտությունները ավելանալու են և չի լինելու դրանցից ոչ մի փրկություն:⁶ Հիսուսն ասել է, որ Նա կգա այդ դժբախտություններից անմիջապես հետո: «Այդ օրերի նեղութիւնից անմիջապէս յետոյ, արեգակը պիտի խաւարի, եւ լուսինը իր լոյսը չպիտի տայ, եւ աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի գորութիւններ պիտի շարժուն: Եւ ապա երկնքի վրայ մարդու Որդու նշանը պիտի երեւայ, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն եւ պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զօրութեամբ եւ բազում փառքով» (Մատթեոս 24:29-30): «Եւ երկրի թագաւորներն ու իշխանները, հազարապետներն ու մեծամեծները, հզօրներն ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները թաքնուեցին [կրթաքնվեն] քարայրներում եւ ժայռերի ծերպերում: Եւ լեռներին ասում

Հարգելի Քահանա Ալամո,

Շատ մարդիկ են փոխակերպվում ձեր գրականության միջոցով, բայց մենք Աստվածաշնչերի կարիք ունենք: Եթե կարող եք, խնդրում ենք ուղարկեք մեր նոր հավատացյալների համար Աստվածաշնչեր:

Թող Աստված օրհնի ձեզ: Հաջողություն: Կսպասեմ ձեր պատասխանին:

Քահանա Վ. Մ.

Լոս Պուերտոս Դե Ալտագրացիա, Վենետուելա

էին՝ ընկե՛ք մեր վրայ, եւ բլուրներին, թե՛ ծածկեցե՛ք մեզ. Որովհետեւ եկաւ նրա բարկութեան մեծ օրը. Եւ ո՛վ կարող է կանգնել նրա առաջ» (Յայտնութիւն 6:15-17):

Հաշվի առնելով այն փաստը, որ Աստծո զայրացած վճիռներին տանող մարգարեությունները բոլորը կատարվել են ժամանակին, մարդիկ, ովքեր չեն հավատում Աստծո դատաստանի աղետների առաջիկա մարգարեություններին և չեն հավատում, որ Աստվածաշունչը բառացի է, ինչպես նաև խորհրդանշական (բայց աշխարհի վերջին, այս խորհրդանշանները իրական աղետների տեսակներն են ժամանակների վերջի և աշխարհի վերջի վերաբերյալ), այդ մարդիկ վտանգված են կորցնելու իրենց կյանքերը, ինչպես նաև իրենց անմահ հոգիները: Մարդիկ, ովքեր չեն հավատում, որ Աստված իսկապես ի նկատի ունի այն, ինչ ասում է, ինքնասպանություն են գործում՝ հոգևոր և ֆիզիկական ինքնասպանություն: Նոյի մարգարեությունը իրականացել է և այդ մասին գրված է: Բոլորը մահացան և ընկան Դժոխք, բացի մարգարե Նոյից և նրա ընտանիքի յոթ անդամներից: Դա զանգվածային ինքնասպանություն էր: Պատմությունը կրկնվում է:

Աշխարհի բոլոր պայմանները համապատասխանում են Աստվածաշնչում նշվածներին, երբ այս ամենը տեղի ունենա: Այս աղետները արդեն սկսվել են. համաճարակ, անբուժելի հիվանդություն, տկարություն, երկրաշարժեր, սով, բռնություն և այլ աղետներ:⁷ Շատերը վտանգավոր են համարում իրենց տներից դուրս գալ, բայց ձեր տանը թաքնվելը չի օգնի ձեզ թաքնվել Աստծո աչքից: Աստված, Սուրբ Հոգին, ամենուր է: Նա տեսնում է ամեն ինչ և գիտի ամեն ինչ, ձեր սրտի բոլոր ցանկությունները (Եբրայեցիներին 4:12):

Բժիշկները և դեղագործական ծառայությունները բազմազան վիրուսների և անբուժելի մանրէների պատճառով, համաճարակում են Աստծո և ինձ հետ. «Մարդը ոչինչ չի կարող անել: Ամեն ինչ Ամենակարող Աստծո ձեռքերում է»:⁸ Ես նախագուշացնում եմ ձեզ շատ լքողքեն. «Պատրաստվեք հանդիպել Աստծուն»:⁹

Մեկ աշխարհի և քաղաքական կոալիցիայի ապակողմնորոշիչ, սուտ վարդապետությունները, որոնք հայտնի են, որպես Նոր Աշխարհի Կարգի եկեղեցի-կառավարություն և հայտնի են Երկնքում որպես գազան, մարմնավաճառ, կեղծ մարգարե, օձ, վիշապ, սատանա, շատ շուտով կավարտվեն: Յուրաքանչյուրն այս աշխարհում պետք է իմանա հիմա, որ փրկությունը չի կարող ստացվել որևէ սուտ կրոնական կամ քաղաքական անդամակցությամբ, այլ միայն Աստծո գոհաբերած Գառան արյունով, Տեր Հիսուսի Քրիստոսի, մեր Արարչի, մեր հավատքի հեղինակի և ավարտողի, Աստծո եկեղեցու ղեկավարի, բոլոր ստեղծագործությունների սկզբի, Մեկի, ով մեզ սիրեց և լվաց մեզ Իր սեփական Արյունով:¹⁰ Նա կենդանի և արտահայտված Աստծո Խոսքն է:¹¹ «Նրա կողմից և Նրա համար է ստեղծվել ամեն ինչ»:¹² Նա է Ալֆան և Օմեգան,

4 Ղկ 21:32 5 Մտ 24:8 6 Մտ 24:14-22, 29-31, Թս Ա 4:15-17, Յոյ 7:13-14, 20:4 7 Մտ 24:6-7, Յոյ 6:4-6, 8:5-13, 9:1-19, 11:13, 16:1-11, 17-21 8 Նյուզվիք, մարտ 28, 1994/ հոդված, որը սովորաբար և հաճախ տպագրվում է Աստիկոսի պրեսի, Յուսիկոսի պրեսի ինթերնեթի և բոլոր մյուս լրատվական ծառայությունների առաջին էջում/Newsweek, March 28, 1994, cover story, and is commonly and frequently in AP, UPI and all other news services. 9 Ամ 4:12 10 Ես 40:28, Եփ 4:15, Եբր 12:2, Յոյ 1:5, 3:14 11 Թհ 1:1-3, 14, 1Թհ 1:1-3, Յոյ 19:13 12 Կղ 1:16

Մեքսիկա

(Թարգմանված է իսպաներենից)

Եղբայր Թոնի,

Աստված թող օրհնի ձեզ և պաշտպանի բոլոր վնասներից: Ողջույններս բոլոր եղբայրներին, ովքեր աշխատում են ձեզ հետ: Խնդրում եմ ուղարկել ինձ գրականություն և վերնաշապիկ իմ ընկերոջ համար, ինչպես նաև երեք Աստվածաշունչ, երեք Մեսիա գիրք իսպաներեն լեզվով: Ձեր գրականությունը հոգիներ է շահում այս մեծ, մոտավորապես երեք միլիոնանոց քաղաքում: Աստված թող օրհնի ձեզ: Ամեն և Ամեն:

Մ. Ա.

Մոնթերեյ, Նուեվո Լեոն, Մեքսիկա

ամեն ինչի սկիզբը և վերջը:¹³ Շարունակական օրական լիարժեք հնագանդությունը պետք է տրվի բացառապես այս և միակ Փրկչին, քանի որ նա է միակ հարությունը և մեր միակ կյանքը:¹⁴ Առանց նրա, մենք ոչինչ չենք կարող անել:¹⁵

Աստվածմեկանգամ ոչնչացրել է ողջ աշխարհը, բացի Նոյից և նրա ընտանիքից, մեղքի նկատմամբ նրանց անբարոյական հակման համար և որովհետև նրանք չէին ապաշխարում: Նոյի և նրա ընտանիքի համար ուժեղ հոգեկան ցնցում էր այդպիսի զանգվածային ինքնասպանություններ տեսնելը: Ես ասում եմ ինքնասպանություն, քանի որ ինքնասպանություն է Աստծուն չհնազանդվելը և ինքնասպանություն է բռնի լինելը: Եվ դարձյալ կրկնում եմ, քանի որ Աստված չի սիրում բռնությունը: Ինքնասպանություն է մեղք գործելը, որովհետև Աստված ասում է մեղքը: Աստված Նոյին և նրա ընտանիքի յոթ անդամներին հաստատուն, աստվածային կերպով, բանավոր հավաստիացրեց, որ Նա երբեք որևէ մեկին աշխարհում կրկին չի խեղդի: Աստծո ջրհեղեղից առաջ երկրի վրա երբեք անձրև չէր եկել: Ամեն ինչ ջրվում էր մառախուղից, որը դուրս էր գալիս գետնից:¹⁶ Աստված նորից կոչնչացնի աշխարհը, այս անգամ կրակով:¹⁷ Բայց մինչ այդ, աղետների սրնթաց հաջորդականություն կլինի, որը կբաժանի Երկիրը մասերի: Այդ աղետներին տանում են որոշ անբուժելի հիվանդություններ ու տկարություններ, ինչպես նաև երկրաշարժերը, սովը և ջրհեղեղները: Երկիր մոլորակը երբեք չի ունեցել այսպիսի ուժեղությամբ համաշարհային երկրաշարժ, ոչ էլ Աստծո սարսափելի աղետները որևէ մեկը, որոնք շատ շուտով տեղի կունենան:¹⁸

Երբ ողջ երկիրը իր ուղեծիրից դուրս գա, այլ չտեսնված, չլսված իրադարձություններ տեղի կունենան: Բոլորը միաժամանակ երկրի վրա և ծովում նախկինում չլսված բարձր ձայներ կլսեն Երկնքից, ամպրոպի որոտներ բոլոր մայրցամաքների և ծովի վրա ու երբեք նախկինում չտեսնված կայծակ, որը համաշխարհային երկրաշարժը ավելի սարսափելի և ահարկու կդարձնի, ավելին, քան մարդկային միտքը կարող է ընկալել: Ազդեցությունը, այս ամենի սարսափելի հետևանքները, յուրաքանչյուրը կզգա իր հոգու խորքում: Յուրաքանչյուր մեղսավոր և սուրբ կիմանա և կզգա, որ ինքը Հիսուս Քրիստոսը, Գառան գայրույթը թափվում երկրի վրա կենդանի Աստծո գահից:¹⁹ Նույնիսկ խուլը, կույրը, բոլորի հետ հավասար կիմանան և կզգան, որ դա Աստծուց է գալիս:

Մարգարե Եսային կանխատեսում է այն, որ երբ Նա (Աստված) «կը յառնի՝ երկիրը պատուհասելու»²⁰ «Երկիրը պիտի շարժուի ու ցնցուի ինչպես այգու պահապանի տնակ, հարբածի ու երերուողի պես պիտի գլորուի»:²¹ Երբ այս համաշխարհային երկրաշարժը և դատաստանի այլ աղետները տեղի են ունենում, վերջին բանը, որ աշխարհի

մարդիկ կուզենան անել, դա որևէ կեղծ, արհեստական, կրոնական ծիսական արարողությունն է, իրենց պլաստմասե կամ մետաղական համրիչները կամ արձանիկներում սփռված գտնելը, մոմեր վառելը, զանգեր խփելը կամ կրոնական զգեստներ հագնելը, երգչախմբի թիկնոցներ գցելը կամ փոքր գլխարկներ կամ այլ անիմաստ, անօգուտ բաներ անելը, որ որոշ կրոնավորներ անում են կարծելով, թե գոհացնում են Աստծուն, մինչդեռ իրականում այս անիմաստությունները միայն զայրացնում ու կատաղեցնում են Աստծուն, քանի որ Նա չի սիրում այդպիսի բաներ: Ըստ Էսայի, Նա ասում է այդ բաները, որովհետև դրանք միաժամանակ հիմար և հայիոյող են:²² Նրանք չեն ընդունում Աստծո թանկագին Որդուն, Հիսուս Քրիստոսին, ինչպես Կայենի առանց արյան ու գառան գոհաբերությունը չեն ընդունել Աստծո թանկագին Որդուն, Հիսուս Քրիստոսին:

Մեկ այլ բան, որ անտեղյակ, անաստված մարդիկ չպետք է անեն այն է, որ չփորձեն կապվել որևէ կեղծ առաքյալի, քարոզչի կամ ուսուցչի հետ, ովքեր հրամայել են նրանց անել այս բոլոր հիմար, կատաղեցնող արարքները: Հիշեք, որ այդ մարդիկ հենց նրանք են, ովքեր ի սկզբանե ստել են, ասելով, թե Աստված, Հայրը, Որդին, Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին (Սուրբ Երրորդության Աստված) երբեք չի անի այնպիսի բան, ինչպես օրինակ ավիրել աշխարհը, սպանել բոլոր չապաշխարող մեղսավորներին, ապա Դժոխք ուղարկել նրանց հոգիները, որը, ինչպես դուք տեսնում եք, Աստված, Հիսուսը և Սուրբ Հոգին (Սուրբ Երրորդության Աստված) անում են:

Եկեղեցական կառավարության գործակալություններին, որոնց մարդիկ վստահել են և վաճառել իրենց հոգիները, որոնք իրենց Աստծուց բարձր են դասել, դիմելու փորձերը ոչ մի լավ բանի չեն բերի: Տներ ի կամ աշխատավայրերի հեռախոսային կապերը չեն աշխատի, ինչպես նաև բոլոր կառավարական շենքերի կամ ոստիկանության բաժանմունքների: Վերջի վերջո, ի նշ կարող են կառավարական աշխատակիցները կամ ոստիկանության բաժանմունքներն անել Աստծո բարկության դեմ: Նրանք ձեզ հետ միասին կլինեն նույն խուճապահար վիճակում: Բոլոր առատաձեռն առողջապահական կազմակերպությունները շատ զբաղված կլինեն, փորձելով թաքնվել Աստծո գայրույթից: Նրանք և ոչ ոք ի վիճակի չի լինի օգնել միմյանց Աստծո գայրույթի ժամին: Նրանք, ովքեր իրենց կյանքը Սատանային և նրա Նոր Աշխարհի Կարգի եկեղեցական - կառավարությանն են նվիրել, կիմանան, որ իրենց համար չկա փրկություն: Քարերը և սարերը չեն կարողանա ծածկել նրանց «նրանից, ով բազմում է գահին [Երկնքում] և Գառան բարկությունից [Հիսուսից]»:²³

Այդ ժամանակ աշխարհը կաթվածահար կգիտակցի, որ նրանք ովքեր ճշմարտությունն էին քարոզում Աստծո գալիք դատաստանի մասին, Աստծո բարկության մասին, որն արդեն իսկ սկսվել է, վտանգավոր աղանդավոր կրոնական առաջնորդներ չէին և ատելությամբ լցված չէին, այլ ուղարկված էին Աստծո կողմից սիրով և գթությամբ, որպեսզի զգուշացնեն աշխարհին Աստծո պահանջների ճշմարտության մասին փրկության համար և թե ինչպես խուսափեն Աստծո արդարացված բարկությունից: Նրանք գթասրտորեն ուղարկված էին զգուշացնելու մարդկանց, թե ինչպես կարող են փրկվել ավելի դաժան դատաստանի հավերժությունից, քան այն, որ նրանք արդեն ապրում են:

Աստծո դատաստանի այդ ժամանակներում աշխարհը կգիտակցի նաև, որ Նա, ով նստում է գահին Երկնքում, Նրա Որդին, Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին միասնական են, ճշմարիտ Աստված են և նրանք այսօր ճիշտ այնպիսին են, ինչպիսին եղել են միշտ և միշտ նույնը կմնան: Այս սարսափելի գայրույթը գալիս է Նրանցից, ինչպես Աստված

(Շարունակությունը էջ 4-ում)

խոստացել է: Նա Իր Խոսքի Աստված է:

Քանի որ մարդիկ հրաժարվել են հավատալ Աստծո Սուրբ Խոսքին, փոխարենը ընտրելով հավատալ Սատանային և նրա սուտ մարգարեների խոսքերին, նրանք զանգվածային ինքնասպանություն են գործում: Աստված, մեր իսկ շահերից ելնելով, Իր բարի ողորմածությամբ, գրել է Իր Խոսքում Իր իրական բնության և բնավորության մասին: Աստված ուզում է, որ այս աշխարհում բոլորը իմանան, որ Նա չի ամաչում կամ զայրանում Ինքն Իր վրա, այլ շատ զայրացած է Սատանայի, նրա հրեշտակների վրա և բոլոր նրանց, ովքեր հետևել են Սատանային և հրաժարվել են ապաշխարել իրենց մեղքերի համար: Աստված զայրացած է և վրեժխնդիր է բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հրաժարվել են Իր ողորմածությունից:

Աստված ուզում է, որ բոլորն աշխարհում իմանան, որ Նա չի սիրում, այլ ատում է սուտ մարգարեներին, ավետարանիչներին և ուսուցիչներին: Նրանք պղծել են Նրա Խոսքը, Նրան ներկայացնելով ինչ-որ թույլ, հանդուրժող Սատանայի և մեղքերի նկատմամբ կամ կնամարդ, անողնաշար, երկբեռանի Աստված: Աստված ասաց Դանիել մարգարեին, որ սա կլինի չորրորդ և վերջին հայհոյող Սատանայի կողմից ղեկավարվող թագավորությունը:

Գրված է. «Նրա [Աստծո] բոլոր ուղիները դատաստան են»: ²⁴ Հիմա, երբ Աստծո դատաստանի աղետները սկսվել են (այսինքն մանրեները, վիրուսները, հազարավոր նոր տիպի քաղցկեղային հիվանդությունները և այլն), աշխարհը սկսում է տեսնել, որ Աստված, ով կանխագուշակեց Իր դատաստանը, չէր կատարում, նույնիսկ այս բառի ամենափոքր իմաստով: Աստված ցույց է տվել աշխարհին նախկինում և կրկին ցույց է տալիս, որ Նա ի կնատի ունի այն, ինչ ասում է: Աստված միաթարական խոսքեր չի ասելու այս վերջին աղետների մասին, ինչպես արեց Նոյի օրերին: Նա չի ասի մեզ, որ ամեն ինչ ավելի լավ կլինի կամ մենք ժամանակ կունենանք լինելու արդյունավետ և արդար և նորից երկիրը կծաղկեցնենք, որովհետև աշխարհը մեկընդմիջտ անդառնալիորեն կվերջանա (Մանդոց 9:7): «Այլևս չկայ ժամանակ: Այլ այն օրը, երբ եօթներորդ հրեշտակը իր փողը հնչեցնի, պիտի կատարուի Աստծու խորհուրդը, որ անետարանուց իր ծառաների մարգարեների միջոցով:» (Յայտնություն 10:6-7):

Եկեք դիտարկենք այն աղետները, որոնք Աստված ասել է, որ արագ կհետևեն վերջ նշված ավերածություններին: Ճիշտ ինչպես Նոյի ժամանակներում մարդիկ երբեք չէին տեսել անձրև, այնպես էլ հիմա ոչ ոք չի տեսել աշխարհը ամբողջությամբ կրակով պատված: «Եւ տարբերք, հրով կիզուած, պիտի լուծուի, եւ երկիրն ու ինչ գործեր, որ կան նրա վրայ, պիտի այրվեն:» (Բ Պետրոս 3:10):

Ամբողջաշխարհի վրա կարկուտ կլինի, յուրաքանչյուրը շուրջ հարյուր ֆունտ ծանրությամբ: Մարդիկ իրենց սատանայական, զանգվածային ինքնասպան եւթյամբ, կհայհոյեն Աստծուն անհավատ և հանդիմանող խոսքերով, ինչը վիրավորական է Աստծո աստվածային վեհություն համար, քանի որ այդ աղետը շատ մեծ կլինի: ²⁵ Մարդկանց բոլոր հայհոյանքները և այլ վրեժխնդրությունները ցավի նկատմամբ, որ Աստված թափում է այս խղճով մարդկանց վրա ապարդյուն են: Նրանք միայն զվարճացնում են Աստծուն, երբ կատարում են: Տերը բազմաձեռն է երկնքում և ծիծաղում է նրանց վրա: ²⁶

Միակ սփոփանքը այս աղետների վերաբերյալ, որ Աստված շատ շուտով կուղարկի աշխարհի վրա, այն է, որ ոչ բոլորը կմահանան և միաժամանակ Դժոխք կընկնեն, ինչպես որ Նոյի օրերին: Այս անգամ ժամանակների վերջում

Աստված շատ ավելի կատաղի է, քան երբևէ մեղսավորների պատճառով, որոնք չեն ապաշխարում և չեն հետևում Նրա սուրբ չափանիշներին երկար տարիներ Աստվածաշնչի ուղերձը եկեղեցիներից լսելուց հետո, որոնք նրանց պարզ ասում էին, որ Աստված խիստ դատավոր է չապաշխարող մեղսավորների նկատմամբ: ²⁷

Այսօրվա անբարոյական և պիղծ աշխարհը գիտի, թե ինչ արեց Աստված աշխարհում, երբ այն դեռ երիտասարդ էր, լսելով այն բոլոր աղետների մասին, ինչպիսի էին՝ ջրհեղեղը, Փարավոնի Եգիպտոսը և Եգիպտոսի առաջնեկի ոչնչացումը, Մոդոմի և Գոմորի ոչնչացումը, Յերիքոյի ոչնչացումը և շատ ուրիշներ: Աստված այս անգամ աշխարհի անբարոյական մարդկանց տանջանքների կենթարկի ²⁸ և կերկարացնի տանջանքները նրանցից որոշների համար, որովհետև նրանք Քրիստոսին հետևելու փոխարեն համառորեն և ցուցադրաբար Սատանային են հետևում, ով ստիպեց Աստծո Որդուն գալ այս երկիր և մահանալ մեզ համար, ստեղծելով այդ աղետներից փրկության հնարավորություններ համար, ամենասարսափելի աղետից՝ Դժոխքից և Հրեղեն լճից:

Սատանան ստիպեց այս աշխարհի յուրաքանչյուր մարդուն մեռնել: Սատանան ստիպեց բոլոր հոգիներին, որոնք Դժոխքում են և գնալու են Դժոխք, մտալ այնտեղ հավիտյան և Սատանան պատճառ դարձավ այս երկրի վրա երբևէ տեղի ունեցած անհանգստությունների: ²⁹ Աստված բացարձակ գթասրտություն է ցուցաբերում մարդկանց կողմարար, հանդուգն, անզոջում չարության նկատմամբ և երեխաների նկատմամբ, ովքեր հետևում են սատանայական արարածին կամ ենթարկվում են նրա եկեղեցուն ու կառավարությանը:

ՍՄՏԱՆԱՅԻ ՆԵՐԿՄԱՅՈՒՄԸ

Մարմավորված սատանան և նրա եկեղեցական կառավարությունը ասում են աշխարհին, իբր թե սիրո, խաղաղության և անվտանգության ուղերձներ ունեն: Այժմ բացահայտված է, թե որքան զգվելի է նրանց պիղծ հորինված ուղերձը: Այն ավելին չէ, քան խելացի մշակված առասպելն ու ամբողջությամբ հորինված: Այս առասպելը, երբ դրան հավատում են, հավատացողներին հավիտյան ուղարկում է ուղիղ Դժոխք (Թեսաղոնիկեցիներին Ա 5:3): Սատանայական արարածները հենց նրանք են, ովքեր ճշում են, որ Աստծո ճշմարիտ մարգարեներն ատելություն են սերմանում: Սիրո ճշմարիտ ուղերձը՝ Աստծո ուղերձն է Քրիստոսի միջոցով փրկության մասին: Աստված պահանջում է, որ դուք հրաժարվեք ցանկացած այլ կրոնից կամ փրկչից, բացի Քրիստոսից, որպեսզի դուք մերժեք Սատանային և մեղքը, և որպեսզի վախենաք Աստծուց ու հետևեք Նրա պատվիրաններին: Եթե չանեք դա, ապա չեք խուսափի Նրա դատաստանից, Նրա զայրույթից և Դժոխքից:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԺԱՄԱՆԱԿԻ ՎԵՐՋԻ ՅՈՒՑԱՆԻՇԸ

Լոս Անջելեսի 1994 թ.-ի հունվարի 19-ի երկրաշարժի հետցնցումների պատճառով երկիրը բացվեց և գետնի տակից հայտնվեց «Հովտի տենդ» անունով վիրուսը, որը վարակեց մեծ թվով մարդկանց: Սա ինձ հիշեցրեց աղետներից մեկը, որն Աստված շուտով կուղարկի այս աշխարհի վրա: Դա կարող է անբնական և անհավատալի թվալ, ինչպես ամպերն ու անձրևն էին թվում Նոյի ժամանակների ինքնասպան մարդկանց, բայց իհարկե, ամպերն ու անձրևը հիմա արդեն սովորական են: Մարդիկ կարող են համոզված լինել, որ այդ մարգարեություններից յուրաքանչյուր մանրամասը կիրականա: Աստծո ողորմածության շնորհիվ, նա մեզ թույլ է տվել, որպեսզի տեսնենք Նրա մարգարեությունների շարքի իրականացումը, նախքան Նրա ողորմածության վերջին օրը:

Ես գիտեմ, որ Տերը ինձ ոգեշնչում է, որպեսզի ես տեսնեմ իմ և Նոյի նմանությունը, որպեսզի միտքս պատրաստ լինի տեսնելու այն բոլոր իրադարձությունները, որոնք շուտով պիտի

կատարվեն: Աստծո խոսքը ճշմարիտ մարգարեություն է: Ինչպես Նոյի օրերին, Նա հաղորդագրություն տվեց աշխարհին աղետների մասին, այդպիսին է նաև Նրա խոստումը աշխարհի բացարձակ վերջի մասին իր կործանիչ աղետներով:

Երկրի բացվելը Լոս Անջելեսի Սան Ֆերնանդոյի Հովտում հիշեցնում է ինձ Աստվածաշնչի սուրբ գրություններից մեկը, որը պատմում է անհատակ փոսի բացվելու և մորեխանման արարածների այնտեղից արձակման մասին, որոնք հինգ ամիս շարունակ կարիճների խայթոցների նման ցավոտ խայթոցներով տանջեցին այս աշխարհի չապաշխարող մեղսավորներին:³⁰ Այն մարդիկ, ովքեր կենթարկվեն նման տանջանքների, կաղաչեն մահվան մասին, բայց նրանց համար մահը հնարավոր չի լինի:³¹ Այն մարդիկ, ովքեր դեռևս ողջ են Աստծո համաշխարհային երկրաշարժից հետո, քիչ տանջանք կզգան Դժոխքի հավերժ կրակում նրանց սպասվող տանջանքների համեմատ:

Ավելի քան երբևէ, հիմա ժամանակն է ձեր հոգին հավերժության նախապատրաստելու համար: Դրախտից և Դժոխքից, Աստծուց ու Սատանայից բացի այլ տարբերակներ չկան: Հավերժական կյանք ստանալը Աստծո աղետներից խուսափելու միակ պաշտպանությունն է, որը ներառում է վերջնականորեն հավիտենական Դժոխքը:

Երկնքից մի հրեշտակ Հովհաննեսին շատ բարձր ձայնով հղեց պարզ և կարճ, բայց ամենակարևոր ուղերձը: Այդ ուղերձն է. «Վախեցե՛ք, Աստծուց եւ փառք տուե՛ք նրան» (ի նկատի ունենալով՝ «Վախեցե՛ք Աստծուց և հետևե՛ք Նրա պատվիրաններին, քանի որ դա է մարդու ամբողջ պատասխանատվությունը»):³² Սա նշանակում է, որ պետք է առանձնացնե՛ք ձեզ չարից, չվերածնված, սրբապիղծ, մարմնական հայացքների տե՛ր մարդկանցից և ձեզ սրբության մեջ պահե՛ք, քանի որ Աստված սուրբ է, առանց սրբության ոչ ոք չի տեսնի Աստծուն: Սրբությունը ձեռք է բերվում Աստծուն հնազանդվելով: Ամեն օր Աստծո խոսքը ընդունելով, մենք սպառում ենք Կյանքի Հացը Դրախտից, Հիսուս Քրիստոսի մարմինը և արյունը: Այս սովորության, այս կիրառման և այս վարժության միջոցով ամեն օր Աստծո հոգրությունը Քրիստոսի հավատքի միջոցով կտրվի մեզ, որպեսզի մենք կարողանանք դիմակայել Սատանայի խաբեություններին: Աստծո հոգրությունը դառնում է մերը Հիսուս Քրիստոսի միջոցով, քանի որ Սուրբ Հոգին մարմնավորված է Նրա խոսքի մեջ, Նա ի վիճակի է ապրել, մտալ, աշխատել մեր մեջ հիասքանչ և հրաշալի կերպով: Մենք դառնում ենք Աստծո տաճարը, որտեղ Աստված բառացիորեն ապրում է:³³

Նույնիսկ Քրիստոսին ընդունելուց հետո ես և դուք, ինչպես Նոյը, կգարմանանք և կսարսափենք, երբ Աստծո դատաստանի աղետները տեղի ունենան: Այս գրականության նպատակն է պատրաստել ձեր հոգին Աստծուն հանդիպելուն և պատրաստել ձեզ, որպեսզի կարողանաք հաղթահարել Աստծո աղետների ազդեցությունը, ինչպես արեց Նոյը, այստեղ աշխարհի վերջին օրերին: Զանգվածային ինքնասպանություններին ականատես լինելը շատ մեծ հարված կլինի:

Աստծո թագավորությունը գերբնական է և ունի մեծ հոգրություն: Հիսուսն ասաց. «Ինձ է տրուած ամեն իշխանություն երկնքում եւ երկրի վրայ» (Մատթեոս 28:19): Մեր շունչը Նրա ձեռքերում է: Մեզանից նրանք, ովքեր վերածնվել են Հոգով այդ թագավորության թագավորներն և քահանաներն են: Աստված ճշմարիտ քրիստոնյաներին դարձրել է Իր Թագավորությունը: Մենք, Քրիստոսի մարմինը, Նրա հետ ենք, Երկնքի Թագավորությունում: «Աստծու արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս.... որովհետեւ ահա Աստծու արքայությունը ներսում է [մեր մեջ է, երբ մենք ընդունում ենք Քրիստոսին Հոր հետ միասին Սուրբ Հոգով]» (Ղուկաս 17:21-22): Երկնքի Թագավորությունը երբեք չի ավերվի, բայց կմաս

հավետ, մասնատելով բոլոր երկրային թագավորությունները:³⁴ Դեռ ավելին: Կարդացե՛ք Աստվածաշունչը, իմ գրականությունը, լսե՛ք իմ ռադիո հաղորդումները և կարդացե՛ք իմ կայքը: Ուղարկե՛ք ինձ ձեր հարցերը և Տերն իմ մեջ կպատասխանի այս հարցերին ձեզ համար:

Այսօր մարդիկ, ովքեր կհավատան Հովհաննես և Դանիել Առաքյալների ուղերձներին և կընդունեն Աստծո հրամանները, կփրկվեն: Նրանք Աստծո ողորմածությանը կարժանանան: Նրանք, ովքեր չեն հավատում գալիք աղետների մասին այս ուղերձին, որոնք ամբողջովին ոչնչացնելու են այս աշխարհը և չեն ենթարկվում Աստծո հրամաններին, ինքնասպաններ են, ինչպես Նոյի ժամանակների մարդիկ, ովքեր չհավատացին ջրհեղեղի մասին Նոյի ուղերձին, փնչն այն չիրականացավ, և չհնազանդվեցին Աստծո հրամաններին: Այդ պատճառով, աշխարհի զանգվածային ինքնասպանությունը տեղի ունեցավ: Հիսուսն ասաց Հովհաննեսին. «Այս խօսքերը վստահելի են եւ ճշմարիտ. սուրբ մարգարեների Տեր Աստուածը իր հրեշտակին ուղարկեց իր այդ ծառայի մօտ ցույց տալու այն, ինչ որ շուտով լինելու է» (Յայտնություն 22:6): Հիսուսն ասաց. «Ահա գալիս եմ շուտով: Երանի՛ նրան, ով պահում է այս մարգարեության խօսքը»:³⁵

Հենց հիմա, Աստծու զայրույթի գինու բաժակը լցվել է և թափվում է «անխառն լեցուած է անոր բարկութեան բաժակին մեջ» (Յայտնություն 14:10, 16:19, 19:15): Նրա անխուսափելի, վերջնական դատաստանի մասին նախազգուշացնող ազդանշանները նկատվում են ամենուր աշխարհում: Փրկությունը կարճ ժամանակով հնարավոր է, բայց հիշե՛ք, որ մենք աշխարհի վերջին օրերում ենք: Երկնային Հոր և Նրա Որդու, Հիսուս Քրիստոսի մեծագույն ցանկությունն է, որպեսզի ողջ աշխարհն ապաշխարի մեղքից, անմիջապես հրաժարվի որևէ հետագա վիրավորանքից և անհնազանդությունից Աստծո արդար կառավարության օրենքի և կարգի հանդեպ:³⁶ Աստծո օրենքների և կարգի նկատմամբ անհնազանդությունը մեղք է:³⁷

Աստված ուզում է, որ աշխարհը ընդունի Իր ողորմածությունը և ներումը մարդկանց նախկին մեղքերի համար, որ գործել են, որպեսզի Նա ցույց տա Իր առատ ողորմածությունը նրանց նկատմամբ նրանց հավատքի միջոցով Հիսուս Քրիստոսի քավիչ, հոգին մաքրող արյան միջոցով, որ Աստծո Գառը թափել է խաչի վրա Գողգոթայում նրանց համար:³⁸ Աստված կների ցանկացած իսկապես անկեղծ մարդու նախկին մեղքերը, անկախ նրանից, թե որքան մեծ էր մեղքը և անկախ նրանից, թե ով է նա:³⁹

(Շարունակությունը էջ 8-ում)

34 Դն 2:44 35 Յյու 22:6-7 36 Եզ 33:11, Յհ 3:16, Պտ Բ 3:9 37 Յհ Ա 3:4 38 Սղ 86:5, 1 Պտ 1:18-19 39 Ես 1:18, Սք 7:19, Յհ 6:37

Արքանգաս

Քահանա Թոնի Ալամո,

Ողջույններ Հիսուսի անունով: Շնորհակալ եմ Աստծուց, որ հնարավոր է դարձրել ձեր գալուստը մեր կյանք: Ես ձեզ արդեն մեկ շաբաթ է լսում եմ: Ես բանտում եմ և դեռ ինը տարի բանտարկված եմ լինելու: Ես հիվանդություն ունեմ և բժշկությունը չի օգնում ինձ, այնպես որ աղոթե՛ք ինձ համար: Ես փնտրել եմ իրական Աստծո խոսքը և այն պահից, երբ սկսեցի լսել ձեզ, ես օրհնված եմ ավելի մեծ գիտակցումով ու անհամար վկայություններով, որոնք խոսքը ասում է Իր Աստվածության մասին վկայություն տալու համար: Ես Տիրոջ փրկությունն եմ ուզում և զգում եմ, որ դուք և ձեր եկեղեցին կարող եք ինձ օգնել: Ես ուզում եմ, որ իմ մայրը ապաքինվի և ցանկանում եմ, որ նա դառնա Տիրոջ գործի մասը: Խնդրում եմ Քահանա Ալամո, օգնե՛ք մեզ և Աստծուն Փառք:

Ջ. Վ.

Բրիքլեյ, Արքանգաս

Սա Քահանա Թոնի Ալամոյի Մեսիա գրքի քաղվածքների շարքից քսանվեցերորդն է, որը կշարունակվի յուրաքանչյուր հոդվածում մինչև գրքի ավարտը:

Տպագրված Ամենամեծ Հրաշքը

Մեսիա

Ինչպես հաստատված է Աստվածաշնչյան մարգարեության մեջ

«ՆՐԱ մասին են վկայում բոլոր մարգարենները» (Գործ 10:43)

«Գրքում գրված է Իմ մասին» (Մաթ. 40:7, Եբ. 10:7)

Վ. ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՍԻԱԿԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿՆԵՐԸ
ՆԿԱՐԱԳՐՈՂ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՔՐԻՍՏՈՍՆ ՕԾՅԱԼՆ Է

Երկու բառերն էլ «Քրիստոս» (հունարեն «Քրիստոսոս») և «Մեսիա» (եբրայերեն «Մեսիա») նշանակում են Օծված:¹ Մարդու անկումից հետո և, հետևաբար, Աստծուց բաժանվելուց հետո² մարդկությունը միջնորդի կարիք ուներ, ճշմարիտ փրկչի, ով կարող էր հոգավ մարդու երեք հիմնական կարիքները:

Մեղքը թողել է մարդուն հոգևոր խավարի մեջ, Աստծուց անտեղյակ: Այդ պատճառով, մարդը Խոսքի, կամքի, Աստծո ուղիների մասին գիտելիքի կարիք ունի: Հետևաբար, մարդը կարիք ունի վերածնված, փրկված լինելու: Ինչից փրկված: Պատասխանն է՝ փրկված Դժոխքում և հրեղեն լճում հավերժություն անցկացնելուց: Նա չունի կարիք այսօրվա «Քրիստոնեության», այլ կարիք ունի Քրիստոսի, Փրկչի: Այսօրվա Քրիստոնեությունը կեղծիք է: Քրիստոսն է միակ «ճշմարտությունը», այն ուժը, որի կարիքը մենք ունենք, որպեսզի հաղթահարենք բոլոր խոչընդոտները:

(2) Մեղքը դարձրել է մարդուն մեղավոր, կորուսյալ և Աստծուց բաժանված: Հետևաբար, նա կարիք ունի իր մեղքի

1. Հին Կտակարանում «Օծյալ» բառի օգտագործման օրինակներ տեսեք Ղեստական 4:3, 5, Մաղմոս 2:2, Դանիել 9:24, Թագաւորութիւններ Ա 2:10 գրքերում: «Օծյալ» բառը հաճախ է հանդիպում Ղեստականում, Թագաւորութիւնների Ա և Բ գրքերում և Սաղմոսներում: «Մեսիա» տերմինն օգտագործվում է բարձրագույն քահանայի վերաբերյալ (Ղեստական 4:3, 5, 16, 6:22), ով Քրիստոսի՝ մեր Բարձրագույն Քահանայի, նախատիպն էր: Այն տասնութ անգամ հանդիպում է Թագաւորութիւնների Ա և Բ գրքերում, բայց ոչ միշտ Մեսիական իմաստով: Այս բառը հանդիպում է տասն անգամ Սաղմոսների գրքում, բայց կրկին, ոչ միշտ Մեսիական իմաստով: Սաղմոսներ 2:2, 20:6, 28:8, 84:9, 89:51, 132:10 և 17-ում Մեսիական իմաստով: Սաղմոս 2:2-ը և Դանիելի 9:25 և 26-ը ակնառու հատվածներ են, որոնք վերաբերում են Մեսիայի գալստյանը: 2. Մենդոց 2:16-17, 3:1-19, 6:5, 8:21, 3րդ 15:14-16, 25:4-6, Մաղմոս 14:1-3, 94:11, Եսայի 53:6, 64:6, Երեմիա 17:9-10, Մատթեոս 15:19, Մարկոս 7:21-23, Հռոմեացիներին 3:23, 5:12-19, 8:7-8, Կորնթացիներին Ա 15:21-22, 47, Գաղատացիներին 5:17, 19-21, Ֆիլեսացիներին 4:22, Կորնթացիներին 2:13, 3:5-7:



ԽԱՄԱՄ ՇՐՋԱՆ, Անդրա Պրադեշ, Հնդկաստան:
Պատվարժան Փերումայափալի Երկրորդը և նրա եկեղեցու որոշ անդամներ ցույց են տալիս Քահանա Ալամոյի գրականությունը, որոնք նրանք այժմ բաժանում են իրենց տարածքում:

ներման, վերականգնման, ապաշխարող արդար հոգու համար, սուրբ հաղորդության վերականգնման և վառվող, հավերժական Դժոխքի տանջանքներից և հրեղեն լճից բացարձակ խուսափման: Այս նպատակով մարդը երկնային Քահանայի կարիք ունի:

(3) Մեղքը, ինչը ապստամբություն է Աստծո, Նրա Խոսքի, Նրա կառավարության, Նրա նպատակի դեմ, թողնում է մարդուն ապստամբ էությանը, ինչը արտահայտվում է ինչպես Աստծո, այդպես էլ այլ մարդկանց նկատմամբ դիմադրողականությամբ: Քանի որ մարդը ընկած արարած է, նա կարիք ունի ոչ միայն թագավորի, այլ սուրբ, աստվածային Թագավորի (թագավորների Թագավորի):

Հին Կտակարանի ժամանակներում Աստված ապահովեց մարդկանց հիմնական կարիքները Իր ընտրյալ մարգարեների, քահանաների և թագավորների միջոցով: Բայց, քանի որ բոլոր մարդկային գործիքները կարճ են և ձախողվում են, Աստված ամենասկզբից պլանավորել է, որ Նա կատարյալ Մարգարե, Քահանա, Փրկիչ և Թագավոր կուղարկի մարդկության համար, մեկին կատարյալի Տեսքով, Նրա միածին Որդու տեսքով (Ինքն Իրեն, Էմանուել, Աստված մեզ հետ):

Հին Կտակարանի ժամանակներում այս երեք տիպի ծառաները՝ մարգարեները (Թագաւորութիւններ Գ 19:16), քահանաները (Ելք 29:21, Ղեստական 8:12) և թագավորները

Հնդկաստան

Հարգելի Քահանա Ալամոյին,

Ողջույններս ձեզ՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով: Ես Անդրա Պրադեշից եմ, Հնդկաստանից: Քահանա, ես ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ ձեր գրականության համար, որ ուղարկել էք ինձ: Թող Տեր Հիսուսը օրհնի ձեզ առատորեն: Մենք հիմա բաժանում ենք այդ ավետարանչական գրականությունը: Քահանա, ձեր գրականությունը մեծ ազդեցություն ունի շատ մարդկանց կյանքերի վրա, հատկապես Ձինվեք հոդվածը շատ մարդկանց կյանքերում է փոփոխություն մտցրել: Շնորհակալ եմ այս հիասքանչ գրականությունը ինձ ուղարկելու համար: Ես դեռ շատ պատասխաններ եմ ստանում մարդկանցից: Մենք հոգիներ ենք բերում դեպի Քրիստոս: Խնդրում եմ ուղարկեք տեղեզու և անզլերեն լեզվով Աստվածաշնչեր նրանց համար, ովքեր նոր են գալիս եկեղեցի:

Հատկապես, Քահանա, դուք մեզ նամակ եք ուղարկել, որում ասում եք, որ կուղարկեք մեզ վերնաշապիկներ եկեղեցու պարբերանշանով: Խնդրում եմ ուղարկեք դրանք: Մենք կարիք ունենք սև կամ սպիտակ վերնաշապիկներին: Շնորհակալություն դրանք ուղարկելու համար:

Մենք ամեն օր աղոթում ենք ձեր և ձեր եկեղեցու համար: Աստծո օրհնանքները ձեզ և նրանց, ովքեր ծառայում են ձեր եկեղեցուն: Շնորհակալություն:

Ձերը՝ Նրա Գործերով,
Քահանա Ս. Մ.

Գանգավարամ, Անդրա Պրադեշ, Հնդկաստան

(Թագաւորութիւններ Ա 10:1, 16:12-13), կենտրոնացած էին մեկ գրասենյակում մեկ օծյալ յուղով:

(1) ՔՐԻՍՏՈՍԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԳԱՐԵ

Հին Կտակարանի Մարգարեն ներկայացրեց ազգին և նա տվեց Իր Խոսքերը, Իր ուղերձը մարդկանց: Երբ Մեսիան եկավ, Նա ներկայացրեց Աստծուն կատարյալ և լիարժեք մարդու կերպարով, ինչպես նաև խոսքերով, Իսրայելին և աշխարհին: Երբ Հիսուսը եկավ, Նա ապացուցեց, որ Ինքն է Աստծո կատարյալ մարգարեն. «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի միայն միածին Որդուց, որ Հօր ծնունդ է. նա յայտնեց Նրան [հայտնվեց և բացահայտեց իրեն]» (Յովհաննէս 1:18): «Ով ինձ տեսաւ, տեսաւ Հօրը. ... Չէ ս հաւատում, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրը իմ մէջ: Այն խօսքերը, որ ես ասում եմ ձեզ, ինքս ինձնից չեմ խօսում, այլ Հայրը, որ բնակւում է իմ մէջ, նա է անում գործերը» (Յովհաննէս 14:9-10):

Որպես Մարգարե գալիք Մեսիան Մովսեսին նման կլինի

«Ես նրանց եղբայրներից քեզ նման մի մարգարե մեջտեղ կը հանեմ, իմ պատգամները կը դնեմ նրա բերանը, եւ նա նրանց կ'ասի այն, ինչ ես կը պատուիրեմ նրան: Այն մարդը, որ չի լսի իմ անունից խօսող մարգարեին, նրանից վրէժ կը լուծեմ» (Երկրորդ Օրենք 18:18, 19):

Մովսեսը Աստծո հնազանդ ծառան էր և նա էր ընտրված բոլոր մարգարեներից վեր, հաստատելու գալիք Մեսիայի մարգարեական գործի տեսակը: Այս բոլոր կարևոր մասերում, Քրիստոսը մարգարեն էր «ինչպես Մովսեսը»: Մովսեսը ՕՐԵՆՍՄԴԻՐՆ, ԱՌԱՋՆՈՐԴԸ, ԹԱԳԱՎՈՐԸ և ՏԱՐԱԾՈՂԸ, ՄԱՐԳԱՐԵՆ (Աստծո Խոսնակը), և այն մարդկանց համար ԲԱՐԵԽՈՍՈՂԸ, ում հետ Աստված խոսեց դեմ առ դեմ, հետևաբար Իսրայելում այլևս Մովսեսի նման մարգարե չծնվեց (Բ Օր 34:10-12, Թուեր 12:6-8): Նա էր հրեական պատմության միակ մարդը, ով ունեցավ մարգարեի, քահանայի և թագավորի գործառնությունները մեկ գրասենյակի ներքո:

Որքան ճիշտ էին մարդիկ, ովքեր, երբ տեսան Հիսուսի հրաշքը, երբ նա մի քանի հաջող և ձկնով կերակրեց հինգ հազար մարդու, ասացին. «Սա է ճշմարիտ մարգարեն, որ աշխարհ էր գալու» (Յովհաննէս 6:14): «Ճշմարիտ մարգարեն» ակնարկվում է նաև Յովհաննէսի 1:21-ում:

Չնայած Մովսեսը վեհ էր, Հիսուսն ավելի վեհ է: Մովսեսը հավատարիմ էր որպես «ծառ», իսկ Հիսուսը որպես «Որդի» կատարյալ և ամենագետ ՄԱՐԳԱՐԵ էր (Եբրայեցիներին 3:5-6), ով «հավատարիմ է Նրան, ով նշանակեց Նրան» (Եբրայեցիներին 3:2):

Պետրոսը տաճարում իր քարոզը եզրափակեց այս բառերով. «Մովսեսը մեր հայրերին ասաց. «Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրների միջիցին ձեր մի մարգարե պիտի հանձնե՞զ համար. նրան պիտի լսեք ամեն ինչում, ինչ էլ որ նա ձեզ ասի. եւ ամեն մարդ, որ այդ մարգարեին չլսի, ժողովրդի միջից պիտի բնաջնջուի» (Գործք 3:22-23):

Երկու կտակարաններում էլ տարբեր հղումներ են արվում Քրիստոսի մարգարեական գործին: Եսայի 61:1-ը և Դուկասի 4:18-ը հղում են կատարում Քրիստոսի մարգարեական գործին և երկուսն էլ նույն բանն են արտահայտում. «Տիրոջ Հոգին իմ վրայ է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին աւետարանելու, սրտով բեկեալներին բժշկելու, զերիներին ազատում քարոզելու եւ կոյրերին տեսողություն, կեղեքուածներին ազատ արձակելու, Տիրոջը ընդունելի տարին հռչակելու»:

(2) ՔՐԻՍՏՈՍԸ ՈՐՊԵՍ ՔԱՀԱՆԱ

Հին Կտակարանի քահանան, ով ընտրված էր Աստծո կողմից, ներկայացրեց մարդկանց Աստծուն և զոհաբերություններ

առաջարկեց նրանց մեղքերի համար: Նա նաև ուներ կարեկցանքի առաքելություն «տգէտներին եւ մոլորուածներին» (Եբրայեցիներին 5:1-2): Այս քահանայությունը, որտեղ Ահարոնը առաջին քահանան էր, անկատար էր, քահանաներն իրենք էին մեղսավոր և նրանք առաջին հերթին պետք է զոհաբերություն անեին իրենց սեփական մեղքերի համար, ապա այլ մարդկանց մեղքերի համար (Եբրայեցիներին 5:3, 7:27-28, 9:7): Ավելին, նրանց քահանայությունը կարճ կյանք ապրեց, հաճախ այն ընդհատվում էր մահով (Եբրայեցիներին 7:23): Ավելին, այն, ինչ նրանք առաջարկում էին, ընդամենը խորհրդանիշներ էին, անհնար է, որ «նոխազների եւ ցուլերի արինը չէր կարող վերացնել մեղքերը» (Եբրայեցիներին 10:4):

Բայց ՔՐԻՍՏՈՍԻ մեջ, Աստծո կողմից նշանակված Բարձրագույն Քահանայի, մենք ունենք ոչ միայն կատարյալ Բարձրագույն Քահանա, ով ապրում է հավիտյան, այլ Նա տվեց ԻՐԵՆ մեր մեղքերի համար, մի կատարյալ զոհաբերություն, մեկընդմիջ բացարձակ քավություն բոլորի համար, մարդկության մեղքերի համար:

«Արդարեւ, մեզ պետք էր ճիշտ այսպիսի մի քահանայապետ սուրբ, անմեղ, անարատ, զատուած մեղաւորներից եւ բարձրացած աւելի վեր, քան երկինքները, որը, ինչպէս այլ քահանայապետներ [հին ուխտի քահանաները], պետք չունի նախ իր մեղքերի համար զոհեր մատուցելու եւ ապա ժողովրդի մեղքերի համար. իսկ ՔՐԻՍՏՈՍ ՄԵՎ ԸՆԴՄԻՇՏ կատարեց այդ բանը, քանի որ ԻՆԲԸ ԻՐԵՆՆ պատարագ մատուցեց: Օրէնքը քահանայապետներ է կարգում տկարութիւններով պատած մարդկանց, իսկ երդման խօսքը, որ օրէնքից յետոյ է գալիս, կարգում է ՈՐԴՈՒՆ [մեր Բարձրագույն Քահանային], որ յաւիտեան կատարեալ է» (Եբրայեցիներին 7:26-28, 9:11-14, 25-26):

Այսպիսով, մեկ անգամ կատարյալ պատարագ մատուցելով խաչի վրա, Քրիստոսը «հավիտյան կատարյալ դարձրեց» նրանց, որպեսզի փրկվեն ԻՐԵՆ հավատալու միջոցով (Եբրայեցիներին 7:23-28, 9:25-28, 10:10-14): Եբրայեցիների գիրքի մեծ մասը նվիրված է այն փաստին, որ Հիսուս Քրիստոսի միջոցով, Ատված տվել է մեզ ԻՐ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՔԱՀԱՆԱՆՈՒՄԸ, ով կատարյալ զոհաբերություն արեց ամբողջ մարդկության մեղքերին քավություն տալու համար և այդպես տվեց իր անմահական կյանքը նրանց, ովքեր կրնդունեն Նրան որպես իրենց փոխարինող և Փրկիչ: Մեսիան տվեց մեզ և Իր մարմինը, և Իր հոգին որպես զոհաբերություն մեր մեղքերի համար (Եսայի 53:5, 10):³

Չնայած Ահարոնյան քահանայությունը ներկայացրեց մարդկությանը նրանց մեղքերի քավության շարունակական կարիքը և, որ մեղքերի թողությանը կարելի է արժանանալ միայն արյուն թափելով, (Եբրայեցիներին 9:22), միակ մարդը, ով ընտրված էր պատկերել Մեսիայի ՀԱՎԵՐԺ քահանայությունը ոչ թե Ահարոնն էր, այլ Մեղքիսեղեկն էր (Եբրայեցիներին գլխ. 5-7, Մաղմուս 110:4): Մեղքիսեղեկը որպես Քրիստոսի տեսակ, ներկայացնում է Նրա հավերժական, անփոփոխ քահանայությունը (Եբրայեցիներին 7:3, Նա «մշտնջենապէս կը մտայ քահանայ»):



3. Որոշ իմաստով Մեսիան օծված էր որպես բոլոր, երբ Նա վերցրեց աշխարհի մեղքերը: Նա իսկապես «դարձել էր ... մեղք» մեզ համար (Կորնթացիներին Բ 5:21): Եսայի 53:4-ը տեղեկացնում է այս մասին: ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉԸ (Արքա Հակոբի) այսպես է ասում. «Նա մեր մեղքերն էր վերցնում եւ մեզ համար չարչարում, սակայն մենք նրա ցուրեր, հարուածներն ու չարչարանները համարեցինք իբրեւ Աստուծոց եկած բան»:

Մեսիայի դեպքում դա ՄԵՐ մեղքերի համար էր, ոչ թե ՆՐԱ, որոնց համար ՆԱ այդքան տառապեց: Սբանչելի ուժ էր, որ Քրիստոսը փաստորեն պատրաստ էր տառապել մեր փոխարեն իր չգործած մեղքի համար, մեր մեղքերի համար: Որքե մեկը կարող է եզրակացնել, որ Քրիստոսը «Աստծո Օծյալը», ոչ միայն օծված էր, որպես Աստծո մարգարե, քահանա և թագավոր, այլ նա նաև «օծված» էր մեղքերի համար զոհաբերություն անելու և ՆԱ բառացիորեն ՄԵՐՔ դարձավ մեզ համար: Այսպիսի հզորության, այսպիսի սիրո համար յուրաքանչյուր հավատացյալ պետք է հավերժ շնորհակալ լինի:

(Շարունակությունը էջ 8-ի)

Եթե դու այսօրվանից սկսած թույլ տաս Երրորդությանը ապրել քո մեջ և աշխատել քեզ հետ, դու կփրկվես: «ով մինչև վերջ համբերի [Աստծո գործը անելով], նա պիտի փրկուի» (Մատթեոս 10:22): Աստծուն չհնազանդվելը և Նրա ողորմածությունը չընդունելը մեղք է: «Քանի որ մեղքի վարձը մահն է [հավերժական Դժոխքը]» (Հռոմեացիներին 6:23):

Շուտով Աստծո առաջարկած ողորմածությունը Հիսուս Քրիստոսի միջոցով հասանելի չի լինի: Երբ դա տեղի ունենա, այլևս ոչ մի փրկություն չի լինի: «Նա, ով ամբարիշտ է, թող ամբարշտություն անի, ով կեղտոտ է, թող կեղտոտ լինի, ով արդար է, թող արդարություն անի եւ ով սուրբ է, թող սուրբ լինի» (Յայտնություն 22:11): Եթե ընդունում ես Քրիստոսին, ապա դու արդար ես, եթե դու ժխտում ես Քրիստոսին, ապա կեղտոտ կլինես: Ընդունիր Տեր Հիսուս Քրիստոսին: Ուժի և ժամանակի վատնում է աշխատել մեկի համար, բացի Տեր Հիսուս Քրիստոսից կամ ունենալ որևէ այլ նպատակ, քան Դրախտը: Եթե ցանկանում ես Դրախտը դարձնել քո նպատակը, ապա սկսիր հիմա, առանց հետաձգելու և ասա այս աղոթքը Նրան: Աղոթքը ասելուց հետո, շարունակիր Տիրոջ մեջ, քանզի միայն նրանք, ովքեր կշարունակեն Տիրոջ մեջ, կփրկվեն (Մատթեոս 24:13):

Իմ Տեր, իմ ԱՍՏՎԱԾ, մեղքերիս քավություն եմ խնդրում հոգուս համար, ես, մեղսավորս:⁴⁰ Հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո ՈՐԴԻՆ է:⁴¹ Հավատում եմ, որ ՆԱ մահացավ խաչի վրա և ԻՐ անգին արյունը թափեց իմ գործած բոլոր մեղքերի քավության համար:⁴² Հավատում եմ, որ ԱՍՏՎԱԾ իր ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՐ ուժի շնորհիվ կյանքի բերեց Հիսուսին:⁴³ և որ Հիսուսը նստում է ԱՍՏՈՒ աջ կողմում և այս պահին լսում է իմ մեղքերի խոստովանությունը և այս աղոթքը:⁴⁴ Տեր Հիսուս, ես իմ սրտի դուռը բացում եմ և հրավիրում եմ Քեզ իմ սրտի մեջ:⁴⁵ Մաքրիր իմ բոլոր մեղքերը ՔՈՒ անգին արյունով, որ ԴՈՒ թափեցիր խաչի վրա իմ փոխարեն Գողգոթայում:⁴⁶ ԴՈՒ չես հեռացնի ինձ, Տեր Հիսուս, ԴՈՒ կներես իմ մեղքերը և կփրկես

իմ հոգին: Ես գիտեմ, որովհետև ՔՈՒ ՆՈՍՔԸ, Աստվածաշունչն է այդպես ասում:⁴⁷ ԱՍՏՈՒ ՆՈՍՔԸ ասում է, որ ԴՈՒ ոչ ոքից երես չես թեքի, այդ թվում և ինձնից:⁴⁸ Հետևաբար, ես գիտեմ, որ ԴՈՒ լսել ես ինձ, և ԴՈՒ պատասխանել ես ինձ, և ես գիտեմ, որ փրկված եմ:⁴⁹ Ես շնորհակալ եմ ՔԵԶԱՆԻՑ, ՏԵՐ ՀԻՍՈՒՍ, իմ հոգին փրկելու համար, և ես ցույց կտամ իմ շնորհակալությունը՝ հետևելով ՔՈՒ հրամաններին և այլևս մեղք չգործելով:⁵⁰

Փրկությունից հետո, Հիսուսը պատվիրեց մկրտություն անցնել, ամբողջովին ընկղմվել ջրի մեջ հանուն ՀՈՐ, և ՈՐԴՎՈ և ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՐ:⁵¹ Պետք է ջանասիրաբար ուսումնասիրել ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ (Հին և Նոր կտակարանների) Եբրայերեն և հունարեն բնօրինակների, թարգմանությունը և անել այն ամենը, ինչ այնտեղ ասված է մինչև քո վերջին օրը:⁵²

ԱՍՏՎԱԾ ուզում է, որ դու պատմես քո փրկության մասին մյուսներին: Դու կարող ես դառնալ Քահանա Թոնի Ալամոյի Ավետարանչական գրականության տարածողը: Մենք անվճար կուղարկենք քեզ այդ գրականությունը: Ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք կամ էլեկտրոնային նամակ ուղարկեք մեզ: Եվ տարածեք այդ ուղերձները:

Եթե ուզում եք, որ աշխարհը փրկվի, ինչպես Հիսուսը է պատվիրում, ապա մի կողոպտեք ԱՍՏՈՒՆ, ԻՐ տասանորդները: Աստված ասում է. «Մի թե մարդը կկողոպտի ԱՍՏՈՒՆ. Իսկ դուք կողոպտում եք ԻՆՁ: Բայց դուք ասում եք. «ՔԵԶԱՆԻՑ ի՞նչ ենք գողացել: Տասանորդներն ու նվիրաբերությունները: Անեծքով անիծված եք, քանի որ կողոպտում եք ԻՆՁ, ամբողջ ազգը և [նույնիսկ ամբողջ աշխարհը]: Բոլոր տասանորդները [համախառն եկամուտի 10%-ը] ամբար բերեք, որպեսզի ՏԱՆՍ [փրկված հոգիները] մեջ ուտելիք լինի [հոգևոր ուտելիք] և ապացուցեք ԻՆՁ այդպես, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ: Եթե չբացեմ Դրախտի պատուհանները ձեզ համար և օրհնություն չթափեմ ձեզ վրա, ուրեմն դուք վայր չեք ունենա դրանք ստանալու համար: Հանուն ձեզ կհանդիմանեմ վնաս հասցնողին, որ նա այլևս չավերի ձեր պտուղը, և ձեր այգու որթնատունկը անպտուղ չի լինի, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ: Բոլոր ազգերը երանի կտան ձեզ և դուք ցանկալի երկիր կդառնաք, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ» (Մաղաքիա 3:8-12):

40 Սղ 51:5, Հն 3:10-12, 23 41 Ստ 26:63-64, 27:54, Ղկ 1:30-33, Ցհ 9:35-37, Հն 1:3-4 42 Գրծ 4:12, 20:28, Հն 3:25, Ա.Ցհ 1:7, Յյտ 5:9 43 Սղ 16:9-10, Մտ 28:5-7, Սրկ 16:9, 12, 14, Ցհ 2:19, 21, 10:17-18, 11:25, Գրծ 2:24, 3:15, Հն 8:11, Ա.Կրնթ 15:3-7 44 Ղկ 22:69, Գրծ 2:25-36, Եբր 10:12-13 45 Ա.Կր 3:16, Յյտ 3:20 46 Եփ 2:13-22, Եբր 9:22, 13:12, 20-21, Ա.Ցհ. 1:7, Յյտ 1:5, 7:14 47 Ստ 26:28, Գրծ 2:21, 4:12, Եփ 1:7, Կղ 1:14 48 Ստ 21:22, Ցհ 6:35, 37-40, Հն 10:13 49 Եբր 11:6 50 Ցհ 5:14, 8:11, Հն 6:4, Ա.Կր 15:10, Յյտ 7:14, 22:14 51 Ստ 28:18-20, Ցհ 3:5, Գրծ 2:38, 19:3-5 52 Բ.Օր 4:29, 13:4, 26:16, Ես 1:8, 22:5, Բ.Տմ 2:15, 3:14-17, Յղ 1:22-25, Յյտ 3:18

Խնդրում ենք, կապվեք մեզ հետ հավելյալ տեղեկատվության և այլ հետաքրքրող թեմաների համար:
Tony Alamo, World Pastor, Tony Alamo Christian Ministries Worldwide • P.O. Box 2948, Hollywood, CA 90078
Քսանչորսժամյա հեռարձակում և տեղեկատվական թեժ գիծ: (661) 252-5686 • Fax (661) 252-4362
www.alamoministries.com • info@alamoministries.com

Թոնի Ալամո, Համաշխարհային Քահանա, Թոնի Ալամոյի Քրիստոնեական Առաքելությունը ԱՄՆ-ում բնակվողների համար տրամադրում է բոլոր հարմարություններով կազարաններ, այն բոլորի համար, ովքեր իրենց ամբողջ սրտով, հոգով, մտքով և ուժով ուզում են ծառայել ԱՍՏՈՒՆ:

Նյու-Յորքում ծառայությունները անց են կցվում ամեն Երեքշաբթի ժամը 20:00-ին, իսկ այլ բնակավայրերում ամեն գիշեր:
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՏՈ ԿԱՐՈՂ ԵՔ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ:

Խնդրում ենք զանգահարել (908) 937-5723 համարով տեղեկատվության համար:

Կարող եք ստանալ Քահանա Ալամոյի գիրքը, Մեսիան, որտեղ ներկայացվում են 333 մարգարեություններ Քրիստոսի մասին, որոնք հայտնաբերվել են Հին Կտակարանում:

Տարածեք Քահանա Ալամոյի գրականությունը և դարձեք բանվոր հոգիների բերքի հավաքման գործում:

Մեր ողջ գրականությունը և աուդիոքարոզներն անվճար են, ներառյալ փոխադրումը:

Եթե որևէ մեկը փորձի ձեզնից վճար պահանջել դրանց համար, խնդրում ենք զանգահարել անվճար այս համարի հաշվին տվյալ հեռախոսահամարով (661) 252-5686

ԱՅՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՓՐԿՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԾՐԱԳԻՐԸ (Գրծ 4:12):

ԴԵՆ ՄԻ ՆԵՏԵՔ ԱՅՆ ՓՈՒՍԱՐԵՆԸ՝ ՓՈՒՍԱՆՑԵՔ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ

Նրանք, ովքեր գտնվում են այլ երկրներում, մենք քաջալերում ենք թարգմանել այս գրականությունը ձեր մայրենի լեզվով:

Գրականությունը վերատպելու դեպքում, խնդրում ենք ներառել հետևյալ հեղինակային իրավունքը և գրանցումը:

© Հեղինակային իրավունք նոյեմբեր 1994, 2006, 2015 Բոլոր իրավունքները պաշտպանված են Աշխարհի Քահանա Թոնի Ալամո © Գրանցված է նոյեմբերի 1994, 2006, 2015
 ARMENIAN—VOLUME 06200—BRACE YOURSELVES